## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 11-Ա

## ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.05.2018Թ.ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**
**Հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1. Խաշթառակ համայնքի 2018թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին
2. << Ակութ >> միջհամայնքային զարգացման հիմնադրամին անհատույց և անժամկետ հողամաս տրամադրելու մասին
3. Համայնքի բնակիչ՝ Աշոտ Ամիրի Օհանյանին << Կըռմըռուտ>> / Համզա / սարամասում տարածք տրամադրելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ
3. ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 12-Ն

## ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համայնքի ղեկավարը 2018թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացրել համայնքի ավագանուն: Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով << ՏԻՄ>> մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով համայնքի ավագանին **որոշում է**

1. Ընդունել ի գիտություն Խաշթառակ համայնքի բյուջեի 2018թ. առաջին եռամսյակի եկամուտների կատարողականը /հատված 1/
2. Ընդունել ի գիտություն Խաշթառակ համայնքի բյուջեի 2018թ. առաջին եռամսյակի ծախսերի կատարողականը / հատված 2/
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ
3. ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

Հաշվետվություն

Խաշթառակ համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ

01.01.2018թ -31.03.2018թ Հատված թիվ 1

| հ/հ | Եկամուտներ | 1-ին եռամսյակի պլան հազ.դր. | Փաստացի կատարումը հազ.դրամ | Կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ | 1000.0 | 290.1 | 29 |
| 2 | Հողի հարկ | 800.0 | 460.2 | 57,5 |
| 4 | Հողի վարձավճար | 450.0 | 99.0 | 22 |
| 5 | Գույքի վարձավճար | 80.0 | 185.0 | 231,2 |
| 7 | Դոտացիա | 7901.1 | 7901.1 | 100 |
| 8 | Տեղական տուրքեր | 10.0 | 0 | 0 |
| 9 | Տեղական վճարներ | 500.0 | 291.5 | 58.3 |
| | Ընդամենը | 10741.1 | 9226.9 | 85.9 |

## Հաշվետվություն
## Խաշթառակ համայնքի բյուջեի ծախսերի վերաբերյալ

01.01.2018թ -31.03.2018թ Հատված թիվ 2

| Հոդ. համար | Հոդվածի անվանումը | 1-ին եռամսյակի պլան հազ. դր. | Փաստ. կատարում հազ.դր. | Կատարման % |
|---|---|---|---|---|
| 4111 | Աշխատավարձ | 5350.0 | 5083.6 | 95 |
| 4212 | Էներգետիկ ծառայություն | 250.0 | 193.0 | 77.2 |
| 4213 | Կոմունալ ծառայություններ | 240.0 | 145.0 | 60.4 |
| 4214 | Կապի ծառայություն | 100.0 | 44.0 | 44 |
| 4215 | Ապահովագրական ծախսեր | 50.0 | 0 | 0 |
| 4221 | Ներքին գործուղումներ | 50.0 | 15.0 | 30 |
| 4232 | Համակարգչային ծառայություն | 50.0 | 0 | 0 |
| 4234 | Տեղեկատվական ծառայություն | 20.0 | 18.0 | 90 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 239 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 372.1 | 65.5 | 17.6 |
| 4241 | Մասնագիտական ծառայություններ | 50.0 | 0 | 0 |
| 4251 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգ. | 300.0 | 0 | 0 |
| 4252 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 250.0 | 101.1 | 40.4 |
| 4261 | Գրասենյակ. նյութեր | 200.0 | 120.0 | 60 |
| 4264 | Տրանսպորտային ծախսեր | 300.0 | 250.0 | 83.3 |
| 4267 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 175.0 | 0 | 0 |
| 4819 | Նվիրատվություններ | 126.0 | 126.0 | 100 |
| 4823 | Պարտադիր վճարներ | 8.0 | 4.0 | 50 |
| 5122 | Վարչական սարքավորումներ | 114.0 | 114.0 | 100 |
| 4511 | Նախադպրոցական կրթություն | 2600.0 | 2420.0 | 93 |
| 4729 | Այլ նպաստներ բյուջեից | 250.0 | 0 | 0 |
| | **Ընդամենը** | **10855.1** | **8698.2** | 80.1 |

Խաշթառակ համայնքի ղեկավար՝ Ա. Վիրաբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 13-Ա

### << ԱԿՈՒԹ >> ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությում իրականացվող Տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 11-035-0101-0027 ծածկագրի 0,55275 հա գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը << Ակութ >> միջհամայնքային զարգացման հիմնադրամին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց և  անժամկետ հանձնելու վերաբերյալ առաջարկությունը՝ գյուղտեխնիկայի հավաքակայան ստեղծելու, հետագայում հիմնադրամի կողմից համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու ազգաբնակչության կենսապահովմանն ուղղված  աշխատանքներ իրականացնելու համար:    Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության << Հողային օրենսգրքի >> 75-րդ հոդվածի 1-ին  մասի   1-ին և 2-րդ կետերով, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Տալ համաձայնություն՝ Խաշթառակ համայնքի վարչական սահմաններում գտնվող  համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 11-035-0101-0027 ծածկագրի 0,55275 հա գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը << Ակութ >>  միջհամայնքային զարգացման հիմնադրամին Հայաստանի  Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց և անժամկետ  հանձնելու վերաբերյալ առաջարկությանը՝ գյուղտեխնիկայի հավաքակայան ստեղծելու,  հետագայում հիմնադրամի կողմից համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն

ու ազգաբնակչության կենսապահովմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու համար
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ
3. ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 14-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ՝ ԱՇՈՏ ԱՄԻՐԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ <<ԿԸՌՄԸՌՈՒՏ>> /ՀԱՄԶԱ/ ՍԱՐԱՄԱՍՈՒՄ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Աշոտ Ամիրի Օհանյանին 2 /երկու/ տարի ժամկետով տրամադրել տարածք <<Կըռմըռուտ>> /Համզա/ սարամասում և թույլատրել արածեցնել անասնագլխաքանակը << Աղաքարեր>> և <<Չըլկաղնուտ>> տարածքներում, ջրումը կատարել <<Կապի ռեխ>> տարածքի աղբյուրից: Պարտավորեցնել Աշոտ Օհանյանին զերծ մնալ սեփականաշնորհված որևէ տարածք անասնագլխաքանակը արածեցնելուց և թույլ չտալ այլ անասնագլխաքանակի մուտքը << Կըռմըռուտ>> /Համզա/ սարամաս մինչև սեփականատերերի խոտհնձի աշխատանքների և կարտոֆիլի բերքահավաքի լիակատար ավարտը

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ
3. ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**